հնությունների պեղումների հետ: Այնուհետև, 1944 թվականի սեպտեմբերի 3-ից մինչև 7-ը այդ աշխատանքն ամբողջացրինք և ստուգումներ ու լրացումներ կատարեցինք: Այդ ժամանակ 90-ից ավելի արձանագրություններ նորից ընդօրինակեցինք՝ գծագրությունը բուն արձանագրության ավելի մոտեցնելու նպատակով: Սակայն, վերջում այդ էլ համարեցինք անբավարար, որովհետև 1954—1955 թվականների ընթացքում, երբ մեջբնդմեջ գրաղված էինք արձանագրությունները հրատարակման պատրաստելու գործով, առաջ եկավ նոր ստուգումներ կատարելու անհրաժեշտություն, որի համար 1956 թվականի մայիսի 23-ից մինչև 26-ը դարձյալ եղանք Սանահնում:

* * *

Այստեղ տպագրվող ճարտարապետական չափագրությունները վերցրել ենք Եղիազարյանցի և Մարտիրոսյանցի՝ 1911 թվականին Ս.-Պետերբուրգում տպագրած «Հայոց հին ճարտարապետության նշմարք»-ի 4-րդ և 5-րդ պրակից, որ կատարել է ակադ. Դրիմմը[1]: Այդ չափագրությունների ընդօրինակությունը, ինչպես նաև Սանահնի մատենադարանի ներսի և մեծ գավթի միջի տեսարանների գրչանկարները կատարել է մեր որդին՝ ճարտարապետության ուսանող Կորյուն Դաֆադարյանը:

Այս պրակում հրատարակվող լուսանկարները վերցրել ենք Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմական թանգարանի լուսանկարչական սևապակիների հնագիտական ժողովածուից, որոնք լուսանկարահանված են Արա և Արտաշես Վրույր եղբայրների, Անուշավան Շիրոյանի և մասամբ էլ թանգարանի այժմյան լուսանկարիչ Պողոս Դրիգորյանի կողմից:

Ներկա գրքույկի սկզբում զետեղված՝ Սանահնի վանքի ընդհանուր տեսարանի ներդիր լուսանկարն ընդօրինակել ենք Եղիազարյանցի և Մարտիրոսյանցի՝ վերևում նշած գործից:

10 III 1957 թ. Կ. Դ.

---

[1] Памятники древнеармянской архитектуры в фотографиях и чертежах. Составили Л. Егиазаров и Р. Мартиросянц, СПБ, 1911.